Ճապոնիայի արտաքին գործերի նախարարի 2021թ.-ի գովասանագիր

2021 թվականի օգոստոսի 20-ին Ճապոնիայի կառավարությունը հայտարարել է արտաքին գործերի նախարարի գովասանագրի այդ տարվա մրցանակակիրներին: Հայաստանից պարգևատրվել են «Հիկարի» հայ-ճապոնական գիտակրթական և մշակութային կենտրոնը և «Իրոհա» հայ-ճապոնական կրթական և մշակութային փոխանակման կենտրոնը: Դեսպան Ֆուկուշիման հանձնել է գովասանագրերը 2022թ.-ի հունիսի 8-ին և 9-ին համապատասխանաբար:

Արտաքին գործերի նախարարի գովասանագիրը տրվում է միջազգային բնագավառում ակնառու նվաճումների հասած անհատներին և խմբերին՝ ի գնահատանք նրանց ներդրմանը Ճապոնիայի և այլ երկրների միջև բարեկամության խթանման գործում: Գովասանագրի նպատակն է նաև նպաստել ճապոնական հասարակության կողմից վերջիններիս գործունեության ըմբռնմանն ու աջակցությանը:

«Հիկարի» կենտրոնը (ներկայացուցիչ՝ տիկին Կարինե Փիլիպոսյան) ստեղծվել է 2009 թվականին՝ նպատակ ունենալով հարթակ տրամադրել ճապոնական մշակույթով հետաքրքրված անհատներին և խմբերին միմյանց հետ շփվելու համար: Կենտրոնը կանոնավոր կերպով անցկացնում է օրիգամիի դասեր երիտասարդների համար և կազմակերպում տարվա չորս եղանակներին համապատասխանող ճապոնական մշակութային միջոցառումներ (հինամացուրի, տանաբատա և այլն): Կենտրոնն այս անգամ արժանացել է արտաքին գործերի նախարարի գովասանագրի՝ ճապոնական մշակույթի տարածման միջոցով երկու երկրների միջև փոխըմբռնման խթանման գործում ներդրած ավանդի համար:

«Իրոհա» կենտրոնը (ներկայացուցիչ՝ տիկին Ռուզան Խոջիկյան) հիմնադրվել է 2014 թվականին՝ որպես ճապոներենի մասնավոր ուսումնական հաստատություն: Այն Հայաստանում միակ հաստատությունն է, որը հյուրընկալում է դասախոսների Ճապոնիայից, իսկ կենտրոնի ուսանողներից շատերը բարեհաջող հանձնել են ճապոներենի իմացության թեստ: Այն մեծ դեր է խաղում ճապոներենի հանրահռչակման և Հայաստանում ճապոներենի իմացությունը բարելավելու գործում: Այս անգամ «Իրոհա» կենտրոնն արժանացել է ԱԳ նախարարի գովասանագրի՝ ճապոներենի կրթության խթանման միջոցով երկու երկրների միջև փոխըմբռնման զարգացման գործում ներդրած ավանդի համար:

«Հիկարի» կենտրոն



«Իրոհա» կենտրոն